Դեռ յիշեալ քարաժայուի գլուխն էինք, աչքերս յառած շարունակ եւ անյագ կերպով գիտում էի գլմացս գտնուող ու ուշքս գրաւող պարտէզների վրայ եւ մեքենայաքար կրկնեցի իմ հարցումը. Բարեկամ, միթէ դրանց ամենն էլ միայն քրդաց ու թրքաց են պատկանում: Խակ նա գառնարով դէպի ինձ առանց գլուխը բարձրացնելու պատասխանեցաւ «Այո՛, ամենքն էլ նրանց են պատկանում, ոչ մի գեափուր իրաւունք չունի մինչեւ անգամ նբանց մօտից անցնելու»...:

Նրա վերջին վճռողական ցուրտ խօսքերից սառած՝ կանգնած տեղս մնացի իրեւ արձան. իսկ մօտենալով ինձ՝ ցաւակցելով գոչեց.

«Ո՛վ բարեկամ, ինչո՞ւ զուր տեղ տիրում ես, միթէ չգիտես, որ Հայն աշխատելու շնորհք ունի, իսկ վայելելու ոչ»...:

«Նոտապէ, լինէնք»...:

Յիշեալ քարաբերդից ցած իջնելով, չգիտեմ որտեղից պատահէցին միքանի ճանապարհորդներ— հայ եւ քուրդ բեռնաւորեալ ջորիներով: Ասպի խաս փառ մշնդանիւնի իւս նոյնի աւ Բարեկամ, ուր էք գնում: « ծապաղթուր»...:

յանը— Լաւ ուրեմն. Աստուած ձեզ ուղարկել է ինձ համար...: յորդ Երեկոյեան արեգակի մայր մննելու ժամանակն էր, Բարեկին մնաս բարեաւ ասելով՝ լնկերացայ հայ եւ քուրդ ջորեապանների հետ: Ինչ մարդիկ էին դրանք եւ ուրեմն գնում: Մարդիկ էին էլի՛... եւ պատցին ծապաղթուր... ես էլ պիտի Երթամ ծապաղթուր...: Անցաւու ախտանիւթ իւ ընրոք մանց ծապաղթուր, որ ատկում է գտնիւմ է Բալուի եւ Մշոյ միջեւ, մի քանի գիւղեր միանին առնելով գտառի անունն է, իսկ կենդրոնը՝ Զէվլիկ գիւղն է, ուր նստում է միւտիւրը: Ինչպէս ասացի, երեկոյ էր. ջորեպանների հետ ընկերանալով եւ հարաւարեւելեան ուղին ձեռք առնելով գնում ենք: Սնցել էր բաւականին ժամանակ գիշերուանից, մենք դեռ մացանների միջից պտոյտներով անցնող ճանապարհներս շարունակում էինք, բայց թէ այժմ ինչո՞ւ հիստիսարեւելք եւ ոչ հարաւարեւելք ենք գնում: եւ ինչ շների հաջոյներ են, որ լովում են, մեր առաջ բարձրացող կաղնախիտ լեռան մտորութից. արգեօք նոտ չէ մեր իջեւան ծապաղթուրը, բարեկամ: «Այո՛, մերը նա է, բայց ոչ քոնը...: Տեսնաւմ ես այն գիւղն. նրա անունն է Արմութաղ, քու գնալու տեղը՝ ծապաղթուր մնաց անդին— վեց ժամ հեռաւորութեամբ հարաւարեւելք»...:

Հասանք այնտեղ, որտեղից շների հաջոյներն էին լովում: Քեռները վար առին, քաշուեցան վրանների տակ: Վրաններ որ ասում ենք, վերոյիշեալ գիւղայիններին էին վերաբերում, որոնք օդափոխութեան (եայլախ) էին ելած, թէեւ գիւղն ու վրանները միեւնոյն լեռան ստորոտումն էին գտնվում: Ես եւ հետեւելով նրանց մտայ մի վրանի տակ, եւ առանց այն էլ լուսացած գիշերը մի կերպ լուսացրի...:

Հորիզոնից արշալոյսը ծայր տուաւ եւ շրջակաւրի հաստաբուն կաղնիների անտառի խորքերից թռչնիկները խատուտիկ թեւկիկներնին թափ տալով՝ սկսան երգել:

Վրանից գուրս վազեցի, չափեցի ու չափնեցի, ես ինձ
գտայ մի անծանօթ տեղ։ Ուրեւ ո՞ր կողմը պէտք է գնալ։
Նրանք ջորեապաններն, այեւս ընկեր չէին ինձ, այս է եղել
նրանց գալու տեղը։ Ուրեմն ինչ պէտք է անել այս գառ-
նագգեստ գայլիրի մէջ, . . .

Սյա վերոյիշեալ քրդագիւղը գտնվում է Բագուի արեւելեան կողմը մի կազնախիտ ձորակում՝ գրեթէ միեց ժամ հեռաւորութեամբ եւ մի ահագին հեռաւորութիւն կար դեռ մինչ ԶԵՎՈՒԿ, անիրաւ ջորեապաններն ինձ խարեւ էին...։ Անձարն ուսում է բանջարը: Մի քրդի ն դշ. (մօտ 60 կ.) տակով արեգակի ծագման հետ ելանք հարաւարեւելեան կողմից ոլորմողը պտոյմաներով բարձրացող եւ խիթ առ խիտ հաստաբան կազնիներից արջապատռած նեղիկ ուղին ձեռք առինք:

Գնում ենք, մերթ բարձրանալով այն հաստաբուն եւ
ճիւզաշատ կազմիների միջից գէպի կոնաձեւ թրախների գլուխը,
մերթ նրա հակառակի իշնելով խոր ծմակներ, ուր անամպ
եթերում զողողացող արեգի ճառագայթները թելքեկուլով
հազիւ էին, թափանցում: Քուրդ առաջնորդս հպարտ տրա-
դազի նման գնում էր առաջից, իսկ ես նրան էի հետեւում:
թէեւ նրա այդ աքազաղական հպարտութիւնն ինձ դիւր էք
գալիս, քանի որ վատահութիւն չունէի, բայց ինչ պէտք է
անել, ճարահատեալ պէտք էր հետեւել...: Զգիտեմ իրեն շրջա-
պատող բնութեան հրաշալիքներավ էր հպարտանում, թէ
մորումը գրած ունէր մի անարդար կորհուրդ: Այդ գեռ
անցայտ էր...: Յայդ մէջ (մայզր) մատելուխուար ու զարու-
իւթեալ մուաքերի հազար ու մի բան, որտեղ մի թափա-
ռական նժդեհի երերուն բախտը յանձնուած է մի անծանօթ
զինեալ քրդի:

Արեգակը հասած էր իւս գագաթնակետին, դեռև մեր
առաջ անմիտ ելեւէ ճնեղ կար անցնելու, ու ծամանեցինք մի
կոնաձեւ լեռան գագաթ եւ փոքր ինչ ապատ շունչ քաշելով՝
հակուեցինք զարխայր դէպի հարաւարեւելք, որտեղից աղօտ
կերպով երեւոյմ էր ԶԵՎԻԿ:

Սյուժամանակ՝ քուրդը՝ կարծես՝ մի հնդկահայ լինէր,
ասելի փքուելով. Եւ թեւերը պարզելով՝ մատնայոց էր անում
մեզ շրջապատող կենդանի երեւոյթները — վճիռ աղբւրների
գլուխը, տերեւախիտ կաղնիների ստուերների տակ մակաղուղ
գառնուիները եւ փոսաձեւ ապառաժների գյուին նստառած
և էլլի ով օդը թնդայնող քուրդ՝ հովահներն, որոնք ասես
թէ, անստառային մի-մի յաւերժական դիցուհիներ լինէին, —
եւ միեւնոյն ժամանակ չէր մոռանում ասելու. «Տեսնում ես
ազատ հայրենեաց՝ ազատ դաւակներին»...:

Սրեգը խոնարհուեցաւ գէպի մուտ, այն անսառային դիցուհիները —քուրդ հավահիներն արդէն իրենց փոքրիկ հօտերով քաշուած էին գէպի եայլախները: Կամաց-կամաց մի խորհրդաւոր լուսիթին մկան տիրել ամեն ուրեք. այնուամենայնիւ մենք եւս անցել էինք այն ձանձրացուցիչ ելեւէջներից եւ հաստաբուն ու ոստախիտ կաղնիների միջից. եւ այն է՝ միքանի կրկես հեռաւորութիւն ունեցող ճանապարհը կտրելով պիտի մոնէինք Զէկիիկ, սակայն որքափ մեծ եղաւ իմ զարմանքն, երբ քուրդը մէկէն կանգ առնելով յօնքերը կիտած, աղձատուած թուքերէն լեզուով դիմեց ինձ. «Այ հէմչէր, սէն պէնի թանըրմաքն, պանա տիրլէր Տէլի Զալուշ, ասաթըրմը ասար, վէ քէստիկիմի քեսէրիմ. Տէօվիէթի Օտաննյաւաէն ֆէրման վար պէնտէ», ցոյց տալով մէջքի ատրճանակը:

—Տէր Աստուած, այս ինչ բանեւս։ Վակառ Եղայք է այս կարծեմ որ հասկանալի է, ու Լաւ փմացած լինիք, որ ից թռչնիկները մինչեւ անգամ ազատ չեն կարող թռչել խուլ ծմակներից» . . . Իսկ մի անփորձ անդէն, Թափա-

ռական ինչ կարող էր անել մի զինեադքուրտի. կահայ-ակամայ քսակս գրպամիցս հանեցի, որի մէջ կար ընդամենը 20-30 դշ. (2-3 մ.), իբրև մի կտոր հաց կծտորդ շան առաջը ձգելով՝ առաջի «Հրամէ», ուեր առ ահա իմ ունեցածս»...:

ჭავალის მუსიკურის განვითარების დროის მიზანი იყო ქართველ მუსიკის განვითარება. ამ მიზანის მიზანით ქართველ მუსიკის განვითარება და მუსიკურის განვითარება ერთ მიზანზე მიმდინარეობდა. ამ მიზანის მიზანით ქართველ მუსიკის განვითარება და მუსიკურის განვითარება ერთ მიზანზე მიმდინარეობდა.

Այս վերջի խօսքերից բոլորովին խղճաշՀարուեց եւ առանց
մի ստակ վեր առնելու՝ քսակս ինձ վերադարձրեց եւ այնուա-
հետեւ ակսեց մոտերմութեամբ փարուել հետո...:

Այժմ տեսարամնը փոխուած է: Գողդոցուն քայլերս ոյժ առին: Հեռի երեւցող ԶԵՎԼԻԿԸ մօտեցաւ եւ հարամք քրոի առաջնորդութեամբ հայ երեսվորիսի տունը:

25. Վիճակը 100-120 տնից բաղկացեալ մի քրդախառն գիւղ է, որ մի ձորակում գտնուելով՝ միջավայրից մի գետակ է հոսում, գալով հիսկարեւմնից եւ գնալով հարաւ, թափվում է Եփրատ գետը:

Հայերը ունին մի փայտաշեն անշուք եկեղեցի՝ քահանա-
յով եւ մի դպրոց՝ վարժապետով, բայց դժբախտաբար ես
չարժանացայ դպրոցը տեսնելու, թէ ժամանակի սղովթեան
եւ թէ վարժապետի բայցակայութեան պատճառով:

Մի գիշեր կենալով երեսփոխի տանը, հետեւեալ առաւտուեան անսպասելի մի յաջողութեամբ Ողնուցի միքանի հայ ճամբարդներ պատահելով, ընկերացայ նրանց:

Աշա, ընթեցն՝ աջքից հեռի խեղճ եղայիներիդ՝ ան-
խտիր ամենի վիճակը բայց մասնաւ մուշտ միլան
մեջ Ողնուատ որ ասացի, նա եւս մի քրդախառն գիտի է եւ
Ս. Կարապետի ականջի ետեւ (արեւմոեան կազմն) է գտնվում:
ու Խմ ուղեկից հայերն իրենց քուրու բառաւոր աղայի հրա-
մանով Մի թուրք պաշտօնեայ իւր ընտանիքով քերած էին
այս գիւղը ԶԵՎիկ: Հարյուշը, արդեօք այդ խեղճ գիւղացիք
վարձատրուեցին իրենց մատուցած ծառայութեան փոխարեւն,
որ տար ժամուայ ձանապարհ ամենայն հրովարեամբ իրենց
աջ թեւը եղաղ ջորիների վրայ բազմեցրած ու բերած էին
այն ցած հոգիներին: Երբ խեղճ գիւղացիք խնարհաբար (այդ խո-
նարհութիւնն է, որ մեր որք ազգի տունը քանդել է եւ մեզ
այս օրին հասցրել) խնդրում են իրենց վարձը, նաև անիշտ
ցած հոգին իրեն գատաւոր ունենալով՝ հայ յոյանըներով ու
սպառնալիքներով վարձատրեց նրանց եւ առանց ամաչելու եւ
առանց ինդահարուելու, այս խօսքերն եւս աւելացրեց գո-
ռալով: «Այ շներ, ձեզինչ վարձատրութիւն է հարկաւոր»:
Ներեցէք, ընթերցասէք բարեկամներ, այս վերայիշեալը
իբրեւ մի միջանկեալ դէպք համառօտակի պատմեցի ձեզ,
բայց պէտք է տեսնէք, որ խորն դպաք...:

ինչ որ քթիւտակ երգում էք. արեգակն՝ իբրեւ մի հնոց երկնային անհուն տարածութեան կենդրոնն, իւր հրալառ ճառագյուղները ժամանցներու ամեն ինչում, մարդուածաջ քերն էին խորխացնում: Անոնք վանական պատկանաւ: Ա շրաշալի տեսարան երբ աչքերդ շուռ ես տալիս քո չորս կողմը, ուրիշ բան չեմ տեսնում, եթէ ոչ բնութեան հրաշալիքներ—մի անծայր երկնային կապտագոյն կամար գլխիդ վերեւ՝ եօթնարփեայ մի մշտավոռ ջահով, աջ ու ձախ կողմից շրջապատուած անտառներ՝ տեսակ-տեսակ—նոնի, մայրի, կաղնի, ջինար, որոնց սրածայր գագաթներն ասես թէ յեթերս երեմն կուտակուող թուխ-թուկս սմանքերը շօշափելիս լինէին: Չորակների եւ ծմակների միջավայրից հոսող վճիռ առուակների գլուխց կարծես պատահական անցորդների ականջներն էին շոյում, գոյնզգոյն ծաղկանց կանաչագեղ մի գորգ համայն ուրեք տարածուած, կարծես, յաւիտենական անմահութիւն բուրող մի դրախտ լինէր: Սակայն մի անգամ ներուի ինձ հարցնել, թէ ովքեր են արդեօք այս նուիրական վայրերում բնակուողներն... Այստեղ պէտք է լուսութիւն պահել...: Ինչեւիցէ նոյն օրը տասն ժամուայ ճանապարհ կտրելով երեկոյեան հասանք Ողնուու—ուղեկիցներիս գիւղը:

Արդէն վերեւ համառօտ կերպով յիշեցի, թէ Ողնուտ Ա. Կարապետի արեւմտեան կողմը մի բարձր սարի ստորոտն է գոնվում: Ժամ հեռաւորութեամբ: Գիւղն 60 տնից է բաղկանում: Կէսր հայ եւ կէսր քուրդ: Հայերն ունին մի քարաշէն եկեղեցի եւ մի դռները փակ դպրոց: Եկեղեցին՝ ծերունիների ասածին նայելով, 200 տարուայ մի պատկառեի պրափայր է:

Ընթերցող, կարծեմ, յիշում էք այն միջանկեալ գէսքը. որ մի քիչ վերեւ պատմեցի: Խօսքս Ողնուոցի հայերի մասին է:

Եատ թէ քիչ տեղեր ման եկայ, շատ հարստահարեալ հայեր տեսայ, այնուամենային նրանք այնքան իմ քարացած

միրով շշարժեցին, որքան այս Ողնուատի հայերը...: Դնման Գուցէ ազնիւրնթերցողներդ ինձ ասէք, թէ ինչ ես միեւն նոյն բանը տասն անգամ կրկնում: Իրաւունք ունիք ասելու. Բայց ասացէք խնդրեմ, ով կարող է աչքերը փափելով անցներ երթալ այնտեղից, որտեղ արդարութիւնն անիրաւութեան անսպաշտպան տկարը բռնաւոր զօրեղին զոհէ գնում: Գիւղին նայելու համար՝ առաւուտեան գիւղական երես փոխի տնից դուրս գալով, գիւղի առաջ ման էի գալիս. մէկէն աչքիս ընկաւ մի ալեղարդ ծերունի, որ աշխատումը էր գիւղի արեւելեան կողմը 20—30 քայլ հեռաւորութիւն ունեցող մի անգի ծայր բահով ածուներ շինելով կաղամքի, սոլիս եւ այլ բաննարեղէնների համար: Ծերունու զառամեալ հասակը սպիտակեալ մօրուսը եւ անխոնջ աշխատութիւնը հետաքրքրութիւնս շարժելով, քայլերս ուղղեցի գէպի այդ պատկառելի նահապետը եւ ամենայն ակնածութեամբ բարեւեցի՝ աւելացնելով այս խօսքերը եւս. «Ինչո՞ւ համար են այս ածուները, հայրիկ»: Ի՞սկ նախը բարեւն առնելով եւ հարցմանս առանց պատախաննեղու, հրավիրեց նստելու կանաչագեղ խոտի վրայ: Ուստի անոնց մաս Աչքերս մթնում է, ամբողջ մարմինս դողում է, արդ տասուացս կաթիլները չեմ կարող բռնել, երբ միտու էլ գալիս այն արեգարդ ծերունու խօսքերը, որ բահին յենած՝ հեկեկալով սկսեց խօսելու ժամանչագեղ խոտի վրայ: Այս բանը մաս «Բալա-թան», ահա քո աչքով խոկ տեսնու մես այս բաննարեղէնի ածուները, մի 75—80 ամեայ ալեղարդիս գողդացուն ձեռքերն են մշակած եւ կրծշակեն բայց «վայելողն է» քսարդն ու փւր լամաւկներ...:

«Տարին տասներկու ամիս արիւն քրտինք ենք թափուա, բահ ու բիշ ենք խփուա, վարուցանք անում, բայց գեղջկական սեղանի չորթ կազմը բոլորուած կուշտ փորով լոկ ցամաք հայ վայելում ենք, Աստուած է վիայ...» Երկարաձիգ

տարիներ սահեցան եւ սահում են, ընտանեկան խազաղ կեանք
անցկացնել անհնարին է դարձել գաւակիներ ենք հասցնում-
որ ուրախանումնք, բայց կարելի է ուրախանալ երբ ժրը ցե-
րեկով մեր նորահարսերն են առեւանգվում, կոյս աղջիկներ
են յափշտակված: ոչ դաս կայ այդ մարդկային ցեցերի հա-
մար եւ ոչ դասաստան, անձնապաշտմանուժեան իրաւանքն
եւս դաշտած են մեզ—չեն թոյլ տալիս հայերիա զենք ունենալ:
«Պատենական 200 տարուայ միարբավայր եկեղեցի ու-
նինք, միայն անդ (Ճեղքը բարձրացնելով գէպի արեւելքան
կողմի եւ ցոյց տալով եկեղեցին) վնասուամ ենք եւ օրոնուամ
մեր վերջին միսիթարութիւնը եւ վերջին սփոփանքը. եթէ
աղատ բայ գտնենք նրա դուռն էլ. Արքայի մասունք ու Մամանակին
դռները բայ, իսկ այժմ, այժմ փակուած. . . . Ինչու
«Մշեցի մի երիտասարդ մի փոքր ժամանակի վարժապե-
տական պաշտօն վարելով այստեղ, հարստահարեալ ժողովը
դեանու քուրդ աղաներից կրած դրվանքները հարկ եղած տեղը
միքանի անգամ հաղորդած լինելով, քուրդ աղաները կիմա-
նան իրենց ապօրինի ընթացքի դէմ քողով բարձողի ով լինելը.
կըսպառնան—չուտել) միմել նրա կեանքին վերջ տալ. . . : Ան-
օգնական, օրէնքի պաշտպանութիւնից գուրկ մի երիտասարդ
ինչ անէք, տեսնելով իւր մօտալուս անմուսափելի կորուսով
(քուրդի համար հայի ու հաւի արժողութիւնն միւէ), խոյն
տալով փախաւ դէպի հայրենիք—Մուշ եւ դամբոցը մինչեւ
օրս մնում է փափ ու փակ» (8. ։ ճ. մ. յունան վայրեսուն)
Ծերոնին այս վերոյիշեալ անցքերը պատմելուց յետոյ,
գլխարկի տակից մի թղթի կտոր հանելով, որի լիայ գրուած
էր միքանի տուն ոտանաւորի նման մի բան, տուած ինձ եւ
ինդրեց ասելով. «Եյս թուղթն առանց կորցնելու կըսպանես
մեր հօջերին (մեծերին) կրտած եւ կասես թէ ձեր խոնարհ
ծառայ Ովնուացի ծերտկ Կարօն ողարկեց» . . . :

Հեծենք բանաւորի լծի տակ, ցըմբը Ս
Մենք զանակունք՝ քաջամարտ Հայկագեան,
ինչ է շուաւուզթեան դառըն բաժակ զ ցըմբասի
բայան իմասենք մենք՝ շառասիզըն Ծորգմեան աւաճ
Հ 01 իւա՞ իի Միանանք եղբարք, միանանք, որ բանաւոր
ունք մասմաս Եղբարք ենք մենք միածին! Հման ին է նմանքը
պատ! Ա իւաչք քայլանց հայրաման նարան ովք ցիսցըն
Հերիք, էլ հերիք, արեան փոխան այսինքն ամիս
դժ և առաջանակ արտասուզք մեր աշերից հօտան, նշանակ
— ամիս նախուզք մոլեանդ, քուրդ վայրենի աղգից հայս ին
ասա ովք հաղածուխնք մեր մայրենի աշխարհից առանց ունի
առ, քիչո մասն Միանանք եղբարք միանանք, միկոյ ին քառ
առ իւանդան Եղբարք ենք մենք միածին:
ունի ըստի զիմ իսպակ զայդ ու զման իրացդամ հմա-
սին զմի Որդիք Զայկաց շառաւիդք Ծորգումայ, ունիուն
սիստ ներ Ուն, սրբենիք սեւ նախատինք մեր ճակատի. յագ դմաց
Ֆեհմինան Յիշենք, էլ միշենք դիւցազն վեհազգնեաց սուզգու
Քի սես Հերուսն՝ աղասութեամ աշխարհիս: ունի ին
Տ Միանանք եղբարք, միանանք,
այսինք բիթեղբարք ենք մենք միածին! ... ովք քիմ
գիստան կոյնմբան ու ուղղուոյ ուսաբան ին, ուսուու
Ծերունու խօսքերին սիրութ ցիմանալով երկար ժամանակ
ունինդիր լինել, յուզուած նրա դողդոջուն ձեռքը համբուրե-
լով՝ մնաս բարեաւ ասացի ու հեռացայ մօտիցը:

Սյն օրը գիւղն ինձ մի սոսկալի բանտ էր թւում, կարծես անխղելի ծանր ցղթաների տակ հեծելիս լինէի, որ կողմ դառնում էի, որիշ բան չէի տեսնում, եթէ ոչ բնովթեան օրէնքին հակառակ երկու տարբեր մահկանացուք, մին բռնաւոր, մին—ոտով ձեռքով կաշկանդուած ստրուկ...:

Կարծեմ՝ այստեղ բացատրութեան հարկ չկայ, թէ որն է ստրուկ, եւ որը բռնաւոր...:

Անցնինք, միայն գոյելով. «Ամեն տեղի անօգնական հէք հայեր, ուրիշների վրայ յոյս միք զնիլ եթէ խնդք ունիք, աշխատեցէք ձեր գլխի ճարր դոք ինքներդ տեսնել»....:

Ճանապարհորդ զինելու պատճառով երկու օր մասլուց յետոյ տեսայ որ ուրիշ միջոց չկայ, մի աղքատիկ հայի 10 դշ. (գրեթէ մի մանէթ) տակով, յունիս 1-ին առաւտօտեան գեռ արեգակը չէր ծագած, ճանապարհ ընկանք գէպի Ս. Կարապետ երթալու։ Անյափ մասն ցից մէջ յէ գլուխ։

Քայլերնիս ուղղեցինք այն կողմը, որ բարձրանում էր մի սրածայր ահագին եւ տեղ-տեղ ձիւնով ծածկուած լեառ— Ողնուտեան սար անունով։ Տակաւին բնութիւնը քնած էր այս- տեղ. մի խորին լուսթիւն թագաւորում էր ամեն ուրեք, եւ ամեն ինչ գեռ նոր էր գլուխը բարձրացնում ճերմակ սա- անի ներքեւից՝ ծանր ու երկար կերպով նիրհելուց յետոյ։

Հետեւում եմ առաջնորդիս, գնում ենք զառի վեր. մի- քանի քայլ վոխում եմ, կանգ եմ առնում եւ շուռ եմ տալիս աչքերս չորս կողմ, ոչինչ չեմ տեսմաւմ, բայց միայն անհեթեթ մի լեառ, տեղ-տեղ ձիւնով ծածկուած եւ ցուրտ, ասես թէ յունուար կամ փեարուար ամիսներում լինէինք։

Այդ օրն էլ այդպէս ոխուր երեւոյթներից շրջապա- տուած, ձինապատ լեռներից ու ձորերից անցնելով, հասանք մեր Մուրատատուր Ս. Կարապետ։ միշտցոյ ամուսնու ապահով զգուն մասնաբար այս ճաւորու լինց ովրին և

զրբանի արաւոնց ու հասաւ անհանգ ոսկի նոյ- նոյ և ուռենի ոչ առաջ հայրան չի հնչ մերժ ոց մէմ նոր ու միայն սիրած նոր անձնութու զնած հերսին ուն- նաւ եւուց ու միա նուննու չի մաս շնչու չի նուննու բանաց միև զարսանյան զնայու ամիս ինչունչ մզգմ եց ...

... Բոլոր նուրբաթեալ խոցուն խոս— միև ուր մի ամի ամի բայց մատնյացուաբաց յժուար նմնար ապահով զգուն ու վաղաւ ...

ուն ուրաց զրյօնադրմաց մի ու զուս մեծաւ մէմ պատշա- կան ունին անհայու ուր ունչ զուս մայ զմկաւու ու ուն մասն մէմ լուսակ մէմ յանդ Բ. բայս ունչ ըմաց մէկա ուր Ս. մասնական բայս բայս Կարապետից Կարին (Երգիռնմայ) զուս բայս ...

Պօտս ունեցած համառօտ յանձնարարագիրը՝ Բարուի հոգեւոր ազգայիններից առ Եղբայր Միաբանութիւն Ս. Կա- րապետի, առաջ գնացի փոխ-տեղապահ արժանապատիւ Խո- րէն վ. Նահնազարեանցի մօտ (այդ ժամանակ վանքի վա- նահայր գերապատիւ սրբ. Մամբրէ եպ. վախճանուած էր) եւ ըստ սովորութեան բարեւ տոլ եւ բարի ողջոյն առնելուց յե- տոյ ինձ առաջարկուած մի աթոռի վրայ նստայ։ Արժանա- պատիւ հայր Խորէնը կարդալով յանձնարարագիրը (որի ի- մաստը իմ կարծիքով այս պիտի լինէր՝ այս խելօք-յիմարը հա- ւատարիմ ուխտաւորաց յանձնելով՝ ուղարկէք ի Ս. Էջմիածնի կամ գէթ Կարին), գոչեց. «Ծիրացու Յակոբ, արի սրան տար մի խուց»....:

Մի լիքն ու ցածլիք սպասաւոր եկաւ եւ ինձ ետեւ ձգե- լով տարաւ մի ցածլիկ խուց. ուր եւ կային արդէն չորս— հինգ անձնու եւ հրամայական եղանակով դոք էլ կարող էք այստեղ հանգստանալ ասեն ու անյայտանալ մէկ եղաւ....:

Միքանի օր մնալով Տարօնի հռչակաւոր Ս. Կարապետ վանքում, ես չեմ կարող այստեղ մի առ մի թուել այն ամենն, ինչ որ տեսայ, որովհետեւ իմ կարողութիւնից վեր է, միայն մի գէպ պատմելով կըբաւականանամ, որից ողջամիտ ընթեր- ցողը շատ եղակացութիւններ կարող է առաջ բերել։

Միքանի օր կենալուց յետոյ մէկէն յայտնուեց այն ցած- լիք ու գէր փոքրաւոր սպասաւորը եւ կրկին ինձ ետեւը ձգելով տարաւ վոխ-վանահօր մօտ, եւ գեռ բարի ողջունին շարժանացած՝ նա դարձաւ գէպի ինձ ասելով. «Աչա քո

բախտից Հին-Նախիջեւանցի եւ Ալէքսանդրապոլիցի ձիաւոր ուխտաւորներ կան. այսօր, հէնց այս բովէիս պիտի մեկնին դէպի Կարին, նրանց հետ կարող են երթալ: Մի նամակ եւս ես կըտամքեզ, որ այնտեղի առաջնորդ արժանապատիւ Մաղաքեայ վար. (այժմ եպիմկանոս) Թրմանեան ինսամք առնելով՝ ուղարկէ Եցմիածին»...:

Իմ կոզմից ասելիք չկար, ուստի յայտնելով իմ շնորհակարութիւնն՝ ինձ ցրց տուած բարերարավթեան մասին, գրասեղանի վրայ ինձ վերաբերեալ գրուած, իմաստն ինձ ամկայտ նամակը վեր առնելով, գույս եւս ուղղակի գնացի եկեղեցի գէթ մի նուագ ծնրադրել այն Մուրատասուր սրբոց առաջ, համբուրել նրանց նուիրական տապանաքարը, որ մատաղորիս խելք տայ, շնորհք տայ եւ ցանկացած նպատակիս հասցնէ...:

Այդ պահուն, նոյնպէս վերոյիշեալ ուխտաւորներն եւս իրենց վերջին հրաժեշտը տալու համար խմբուած էին Ա. Տաճարի առաջ եւ ծնկազոկ գնալով կարգով համբուրում էին Ա. Կարապետի շնորհատու գերեզմանը, ուր կար նաեւ մի պահապետի շնորհատու գերեզմանը, որի ձեռքի մասունք. ամեն ոք իւր կարողութեան չափով սրտաբուխ լուման ձգում էր սրբոց գանձանակը եւ մի աջահամբուր — մասն բաժին ել ըմբռանալով տալ հայր սուրբին, որի ձեռքի մասունքն եւս համբուրում, պարզն ասենք — համբուրելու արժանանալով՝ դուրս էր ենում:

Կարգը գալով ինձ, ես եւս ծնկազոգ մօտեցայ գերեզմանին եւ յետին ևնայած, լումաս գանձանակը գերեզմանի համբռեցի մօւրատատուր Սրբի գերազմանը, մոտագիր էի համբռուրել նաեւ մասունքը, սակայն մի նժգեհի գոզդոցուն շրթունքները չարժանացան զայն համբուրելու, չգիտեմ ինչու կամ մի՞գույշէ աջահամբուրի վաղ ըունենալու համար...:

Երկար ժամանակ գուրաք, եկեղեցու առաջ խռաված մըտքով եւ յուղուած հոգով մնալուց յետոյ, գնացի խուց սուա-

փուս փասէ-փուսէս հաւաքելով՝ վերոյիշեալ ուխտաւորների հետ ճանապարհ եւայ այն օրը (1882 թ. յունիս 3-ին) երեկոյեան, որոնք թուով տամնեւովթ հոգի էին եւ բոլորն էլ ձիաւոր։ Վանքի հիւմիսարեւելեան զառիկեր ճանապարհը ձեռք առած գնում ենք գէպի կարին, առանց յետ նայելու, առանց մի րոպէ կանգ առնել շունչ քաշելու մի գուցէ մի քայլ յետ մնալով՝ ձիաւորները չասեն. «Ոու մեղ հետ չես կարող գալ... յետ դարձիր վանք, գուցէ ուստարուներ լինին»...:

Սրեգակը խոնարհեցաւ ի մուտ եւ կամաց-կամաց մի խուլ լուութիւն յառաջ գալով՝ պատեց շրջակայքը. նրանք ձիաներին մորակերով արշաւում են գէպի յառաջ, իսկ ես հետեւում եմ, մերթ սրբելով ճակտիցս հոսող քրտնքի կաթիլ-ները եւ մերթ զարմանալով իմ յանդգնութեան վրայ... ախր նրանք ձիաւոր են, իսկ ես ուստար...: Թէ եւ ասում են Ա. Կարապետ ձիաւորին զուղաբէ տալիս եւ ոստարին մուրատ...:

Հապանք Սալլրգայ հայագիւղն, որ Ա. Կարապետի հիւմիսային կողմը մի ձորակի մէջ է գտնվում՝ 4—5 ժամ հետաւորութեամբ; Անդ կանգ առնելով երկու խմբի բաժնուած իշան գիշերելու:

Այն ինչ առաջին օրն էր, որ 4—5 ժամ գալով, ես ինձ անշարժութեանց դատապարտուած, երերալու կարողութիւնից նկատուած էի գտնուած։ Այս անգամ եւ ոչ մի երեւոյթ հետաքրքրութիւնս չէր շարժում, բայց միայն ապագայ — առաւտեան երկարձիգ 8—10 ժամուայ գնալիք ճանապարհը...:

Յոգնութիւնը, մօտածմունքը եւ ախոռի մէջ գտնուող օդայի օդի հակառողջապահական ներգործութիւնը վրաս ծանրանալով, նստած տեղս քնած մնացել էի մինչ առաւտեան արեւագալը։ Դեռ շատ երկար պիտի քնէի, եթէ մի սով ձայն ականջիս չհանեէր՝ գոչելով. «Այ ծոյլ, վեր կաց, վեր կաց, մինչեւ երբ խոմիացնես», ...:

Երբ աչքերս շփելով գլուխս բարձրացրի, տեսայ որ ար-

դէն արեգակն իւր յունիսեան ոսկեզօծ ճաճանչներով բարձր լեբանց գագաթների լիրայ շողողողում էր գեղջկուհիները — նոր հարսները, չքնաղ օրիորդները գոյերի կանթերն իրենց թեւերն անցկացրած՝ շրջիւ-շրջիւ շրջիւ-շրջիւ գնում գալիս էին ջուր բերելով. տանտիկնայր կովկիթն առաջնին՝ կովերի տակ պլազած, ֆլշ-ֆլշ կթում էին, իսկ տղամարդիկ՝ բահ ու բրիչ ուսերնին զարկած, երեսնին ազօթարան դարձնելով ու խաչակնքելով՝ խումբ-խումբ գնում էին իրենց գործատեղին արտօրայք: Միուր բանիւ բնութիւնը զուարթ ու գրափշ էր եւ ամեն ինչ շարժման մէջ, բացի մեզանից, որ տակախն քնակարօտ աչքերնիս տրորելով՝ ախոռի գարշահոտ օդն էինք ծծում...:

Յուսկ ուրեմն ելանք եւ մենք, մեր համեստ գեղջկուհին ներին մնաք բարեաւ ասելով, հիւսիսարեւելեան դաշտային հարթ ուղին ձեռք առինք:

Սուաւօտեան արեգակը զուարթ էր եւ օդը թարմ ծիծենակներն արագ—արագ թեւահարելով՝ թռչկոտում էին այդ թարմ օդային մթնողրդուում, կանանցագեղ մարդերում արածուող անդեայք՝ մերթ գլուխ գլխի տալով կամ գոտեմարտում էին կամ խորհրդակցում եւ կամ մերթ էլ քթերնին դժափի վեր բարձրացնելով՝ ծանր կերպավ բառաջում. . . Ինձ այնպէս էր թռում թէ նրանք—այդ անբան անասունները բնազդմամբ մի ինչ որ բան էին հայցում վերին Արարագի՝ իշրենց մօտալուտ անխոտափելի փորձանքից—անձրեւային հեղեղից, կարկուտից եւ կայծակից ազատելու. . .

Ժամանակի անիւը փոփոխական է, առաջնիս—հիմքարեւելեան կողմ պարսպի նման թուի-թուիս ամպեր են բարձրանում հորիզոնից...։ Աչա արեգակն իբրև սգաւոր այրի՝ երեաը սեւ քօղով ծածկեց...։ Թուիս ամպերը գոռում են, փայլակը փայլատակում, շանթաձիգ կայծակներ անընդհատ միւմեանց ետեւից շառաչում։ անձրեւին էլ ասելիք չկար, ուղա-

ծիգ ջափ թափվում է վերեւից վայր, առանց դաշտարման
եւ առանց խնայողութեան. : Բախտաւոր ու փատաւորները հռ
վանոցները բայց արած գլխների վրայ իրենց շրպջ բնաւ չեն
նայում, եւ ոչ մի բանի վրայ ամենեւին ուշք չեն դարձնում,
այլ միայն մորակում են ձիաներին. ինչ է իրեւանը վաղ
համեն. . .

Այս քարասիրտ մարդիկ, մորակեցէք ձիաներիդ եւ գնացէք, թող ես այս ամայի վայրում մնամ միայնակ, կամ գետակների նման հոսող հեղեղներին մէջ խեղդամահ լինիմ։ Այդ օրն ինձ ակամայից անիծել առաւ այն օրն ու վայկանք, որ մայրիկս մեծ երկոնք կրելով զիս ծնաւ աշխարհ բերաւ։

Խչ եւ իցէ, կենացս սեւ օրերի մէջ բնաւ երբէք տեսած չէի այնպիսի ձափորդ բռպէներ եւ ժամեր, որ ինձ մահուան դուռն մօտեցրած լինէին, որչափ այդ անիծեալ օրուայ բռպէներն ու ժամերը...:

Մեր բարեկալաշու ուխտաւորները գնացին, ուր, զգիտեմ, միայն գիտեմ, որ աներեւութացան. մնացի միայնակ լեռնադաշտի. միջավայրում՝ դանդաղաքայլ թաւալուելով գնում եմ. սակայն ուր, այդ եւս զգիտեմ. գլխիս վերեւ. թուխ-թուխ ամպեր միմեւնոց վրայ բարդուած, առաջա լճացեալ անյատակ եւ անձայր ծով, որի մէջ լողում եմ թեւը կռտրած բացի նման:

ԶԵՄ կարծում՝ թէ ողջամիտ ընթերցողը չափազանցութիւն համարէ այս միքանի տոպքը, սր մոլորեալ մի թշուառականի ճշգրիտ նկարագիրն է, այլ անպատճան՝ եւ այն արդարացի կերպով, յանդիմանօրէն ասելու է. «Դու արժանի ես, որ աւելի փառ նեղութիւններ կրես, անմիտ պատճանի, քեզ ի՞նչն ստիպեց թողնել տուն ու տեղ, կամայ գրիկուիլ քո սիրելի ծնողաց փայփայանքից, երեսդ քրծել քա պապենական պաշտելի հազից—Մայր-Հայրենիքից». Այո՛, այդ է եւ արդ է կրիբնի, ով

խաբուակի յոյսերի ետեւից է ընկնում, եւ մեծ մասամբ վայ նրանց, որոնք որեւէ նպատակով թողնում են Մայր-Հայրենիքը՝ իրենց միայն բախտի բերանը յանձնելով»...: բայ դամբանար Մարդու մի չարքաշ բնութիւն ունի մահուան գէմ մաքառելու. մինչդեռ այդ օրը ինձ համար ոչինչ չէր միացել անելիք, եթէ ոչ ասել մնաս բարեաւ աշխարհ...: Սակայն ոչ տղեւները բոլոց հանելով, որոնց ամեն մինը՝ մի-մի լիտր ծանրութիւն ունէր, ձեռք առի այն շատին, ուր նշանավում էին ուխտաւորների ձիաների հետքերն:

Այսպէս թէ այսպէս, մերթ ես ինձ խրախութելով—ահա այր բլրակի ետեան, այն ձօրակի մէջն է... երեկոյեան ուշ ժամանակ հասայ Պաշ-Զիթիկ հայագիւղն, ուր էին նաեւ բարեպաշտ ուխտաւորները...:

Այս գիւղը Ս. Կարապետի հիւսիսարեւելիքան կողմ՝ մի գետակի մօտ է գտնվում՝ 12—13 ժամ հեռաւորութեամբ եւ կըբաղկանայ մօտաւորապէս 35—45 տնից—ընդ նահապետական կարգերով եւ ողորութեամբ, կարծում են նրանք, թէ կան այսպէս եղել է եւ այսպէս էլ կը մնայ անպատճառ։ աշխարհս այսպէս եղել է եւ այսպէս էլ կը մնայ անպատճառ։ նաև նիշ որ է, այժմ ամեն ինչ լրած ու մովմը պատաճ է ամեն ուրեք...:

Ուխտաւորները կատարեալ հանգստութիւն էին վայեւ լրում, թէ էլ ինձ խոնւմ. ես թաթախեալ չորերս փոխելով, մի փախաթի վրայ երկնցայ...: Սահել էին ժամեր, այլ չգիտեմ, թէ քանի, երբ քնիցս զարթնեցի, ինձ բաւական կազդուրուած դրութեան մէջ գտայ. մակայն աչքերս տրորելով՝ երբ մուաքերեցի առաւօտեան գնալու ճանապարհը, կրկին աչքերս փակելով, կրկին ուզեցի քնել, այլ ի զուր, քունն անյայտացաւ աչքերից, երեւակայական մտատանջութեան մէջ գլորուեցայ, կրթաւալուիմ կողքերիս վրայ՝ ինձ անյայտ ճանապարհի երկու ծայրերը պինդ բռնած՝ չափել ու չափչիւլով...: Յուժի ուրեմն լուսացաւ. արեւելեան կողմը—հորիզոնի

վրայ նուրբ-նուրբ շառագոյն ամպեր են երեւում, արեգակը սքօղուած է նրանց ետեւ։ Դարձեալ մօտալուտ փոթորիկ...: Եյան մեր բարեպաշտ ուխտաւորները. ձիաների թամբը սարքել ու սանձը քաշել պրծել էին, հեծան։ Գնում ենք այն ուղիով, որ երկարում է գէպի արեւելք ողրուն պտոյտներով, եւ այսպէս շարունակելով հասանք Լալուզար կոչուած մի ծերմուկի գլուխը, որ Կարնի հարաւարեւմտեան եւ Ս. Կարապետի արեւելեան կողմը մի ապառաժոտ խոր ձորումն է գտնվում, երկու կողմից մօտաւորապէս 14-ական ժամ հեռաւորութեամբ։ Սյդ հանքային ջրերը թէ եւ չորս-հինգ տեղից դուրս են ցայտում, բայց եւ այսպէս անխնամ երեսի վրայ թողուած, ոչ մի օգուտ չոնի ոչ ոք, բացի պատահական ճանապարհորդներից, որ երբեմն կանգ առնելով լողանում են ու կրկին շարունակում իրենց ուղին։

Սյդտեղ կանգ առին նաեւ ձիաւոր ուխտաւորները՝ թէ հանգստանալու եւ թէ լողանալու. ի հարկէ ինձ համար մեծ բախտաւորութիւն էր կէս կամ աւելի ժամ հանգստանալը։ Սյդ թանգ միջոցին մի կէս ժամուայ չափ մի թեթեւ բայց քաղցր քնոյ հանգստութիւն վայելելուց յետոյ վերստին շարունակեցինք մեր ճանապարհը...:


Դարձեալ թուխութուխ ամպեր...:

Ահա հազիւ թէ չորս-հինգ ժամուայ ճանապարհ կտրեցինք, կրկին հորիզոնից թխագոյն փուած ամպեր բարձրացան, դիզուեցան եւ բարդուեցան միմեանց վրայ։ Խփում է շանթաձիգ կայծակը նորաբողքոջ ծառերին՝ արմատախիլ անելով, սեւ ամպերի միջից խշխշոցի ձայներ են լավում, փայլակը փայլատակումէ, ամբող սարեր, ձորեր արձագանք են տալիս—գթութիւն հայցում...:

Կարկուտ... որ մերկացնումէ ամեն ինչ—կոտրելով ծառերի ճիւղեր, ոստեր, չխնայելով ոչ փոքրի, ոչ հասակաւորի, ոչ բախտաւորի եւ ոչ անբախտի, ամենուն եւս համահաւասար

անբախտացնում է։ Ամեն մի ձորակից գետակի նման հեղեղ-ներ խշալով ու ֆշալով հասում են, բերելով իրենց հետ ահագին քարեր, արմատախիւ ծառեր, ամեն կողմից գուռում-գոյումի, խշխոցի, դզրդոցի ձայներ էին, որ լալում էին. ասես թէ ամեն ինչ ապագայից ձեռք վեր առաջ՝ ներկան էր ողբում...:

Վերջապէս այս անգամ՝ ուխտաւորների հետ ուղեկցվին՝
ինձ յետին ծայր յուսահասութեան հասցրեց։ Ինչ որ է,
այդ ձախորդ օրը, երեք-չորս ժամ՝ շարունակ անձրեւի եւ
սառցակոյտ կարկտի տակ մնալուց յետոյ, երեկոյեան ուշ՝
մթնակոխին հաղիւ-հազ մենք յեղ քաշ տալով՝ գցեցինք Ղա-
րա-Նէիս թրբագիւղը եւ մի գիշեր եօլայ գնալով՝ հետեւեալ
առաւօտեան վեր կացանք երեկոյեան ընդհատած ճանապարհ-
ներս կրկին ձեռք առնելով՝ հասանք կարին։



— այսպ շրաբնամատ լուսնաւ քաջա-սղոյ և ի պահ առմ
— այն զարդ զերև նա ուզը հերթակի ցիւմուդուն մէջի զ զի՞չ զ զի՞չ
— և նույն զայի բանակի մաքնարարաց և անգամ ուզի բ մաք
— մատ ցիւմուդուն մէջ մատ զայրարարաց զերև մէջ գիշանեմաց
— զերայի հայոյ և զերայ հրուտիս սիօնի զերիւա և ա իոյ
— սիրա մէ զեւրանցո զեկոն, զերա հրուտա և նույնապատճի
... և ուրիշ մէջ մէջ մէջ
— ած խոյերոյ — զի մէսա և նույնայի զի ... ու ու ու ու ու ու ու
զ ս պատճառակ զ ս պատճառակ զ ս պատճառակ զ ս պատճառակ զ ս պատճառակ

զիքազականացնելու մեջ սպասվության պահանջմանը («Հայութեան») . Ա
բարեմատարք այս սպասվության պահանջմանը առ խոճանա
րաք մէսու տօնքի մի բազմության գործ գրադր (հայութ բարեմատա)

Կարելի է պարզաբանել այս պատճենութեան առաջնական մասը այսպիսի
դժ. հաւաքածի պատճեն Կարելի է կարստի սինկան գցի
մասը պահպան խորացնելու համար առանձ այս ուղարկութեան մասը կամ

Առաջին, Խամաճակին Բարձր-Հայոց երեւելի քաղաքը, ո՞նի իի բարձր դիրք, լի գեղեցիկ տեսարաններով, շրջապատեալ հեռաւոր-մերձաւոր լեռներից, մանաւանդ արեւելեան եւ աւելմտեան կողմերից. լեռների մէջ նշանաւոր են Տէլլ-Պօյնու Փալան-Տէօրէն:

Երկիրն ունի մի լայնածաւալ դաշտավայր, որի երկարութիւնը արեւելքից դեպի արեւմուտք գրեթէ 7—8 ժամ է եւ այնուվելիսը՝ հիսախաց հարաւ 4—5:

Քաղաքը շինուած է լեռոյիշեալ դաշտի հարաւարեւելեան ողմբ. ոնի բայնատարած նստուածք: Օդը խիստ ցուրտ է եւ նակիչք առհասարակ քաջառողջ են:

Աստ Հայերն ունին մի եկեղեցի Ս. Աստուածածին առամբ, որ շինուած է քսան սիւների վրայ կոփածոյ քարեց, եւ ամենագլխաւորն այն է, որ իւր ընդարձակութեամբ Հօկայութեամբ՝ Թրքական Սոհայում գրեթէ անզուգական : Նոյնպէս Հարաւային կողմից՝ կից մի մատուռ կայ—Տարար անուամբ:

Նկեղեցին ունի նաև մի զանգակատուն, եւ իրեն հիւ-
խարեւմուեան կողմը մի քարընկեց Հեռու ընդարձակ մի
ամիգոտքամբ, որ նորառունկ Հովաքեր ու ենիներով ծած-
ուած է, որին տեսնող կամ այցելողը մեծ հաճոյք կը գտայ:

Մնաս բարեաւ կարին, յիրավի շատ դիւրակի տեսարան-
եր ունիս, բայց են շտապում եմ... Եզմիածնի Գէորգեան
եմարակնի դռները բաղ ինձ են սպասում...:

Միքսնի օր մնալուց յետոյ, արժանապատիւ Մաղաքեայ

վ. (այժմ եպիս.) Օրմանեւանից նոյնպէս մի յանձնարարագիր առնելով առ գերազատիւ Գրիգորիս եպիս. Աղուանեանց (առաջնորդ Կարսի), դէպի Կարս գնացող մի երկու տուն գաղթական հայ սայլորդների հետ ճանապարհ ընկայ:

Երբ Կարնից մեկնեցանք, արդէն արեգակը թեքուած էր ի մուտ. մի քառորդ ժամու չափ գնալով՝ քաղաքի արեւելեան կողմը Կիւմիւշ գմբեթ կոչուած բրդաձեւ մի բերդի մօտ սայլապաններն եղները լծից արձակեցին:

Մովթը պատուծ էր արդէն ամեն ուրեք գաղթական ների ազգական-բարեկարմները վերջնական գրկախառնութիւնից յետոյ, բաժանուեցան, վերադարձան քաղաք՝ թողնելով մի տիսոր պատվեր...:

Սյովթ համատարած գիշերային մուժը իւր սեւ վարագուրի ներքեւ ամեն ինչ քողարկե...:

Ինչ որ է, բոլորուեցաւ այդ գիշերը, արեւելեան կողմը հորիզոնից բարձրացաւ լուսափայլ արուահեակը սայլապանները վերկայան, եղները ծելով իրենց առաջնորդիւ արուահեակը լուսով Տէվի-Պօյսու ճանապարհը ձեռք առին. Սայլերի անիւները թր՛գ-թր՛գ ձայներ ու ճուղներ են գանում, ծծկեր մասնուն իւր մօր գրկում սեզմուած՝ մերթ ընդ մերթ նուաղական ճշեր է արձակում. գործվագուժ մօր սրտի խորքից երկար ախեր էլին, որ գույս էին սահնում. . .

— Այ մայրիկ, քո ցան ինչ է....

Դարձեակ «ախ»...:

Դնում ենք գանգազ, սակայն շարունակ...:

Երկու միւնեանց հակառակ տեսարաններ՝ մարդուս առաջ պատկերանում են— արեգակն իւր գեղազուարթ և պազզուն ճառագայթներով, որ զուշողում էր ամեն ուրեք, իսկ միւր՝ Ուռաւ թքական պատերազմի աւերածները. թէեւ անցեալ, սակայն իւր տիսոր հետքերով գեռ ահ ու արհաւերքի մէջ էր թողնուամեն մի ականատեսի, որ գերախառաթիւն կունենալ այդ-

առերածով անցնել եւ հարեւանցի կերպով մի ակնարկ գցել այն ժամանուած թնդանօթի կիւլի կտրոներին, որոնք քանի քանի անմեղների արեան մէջ շաղաղուելուց յետոյ, ցիրուցան իբրեւ անպէտք ընկած էին՝ միմիայն մի անցեալ յիշեցնելու...: Տէվի-Պօյսու, այդ մարդկային արեամբ ներկուած ոլորմուրը ճանապարհը մեր ետեւ թողնելով, արեգակը դեռ մեր գաղթաթնակէտին չէր հասել, մենք հասանք Նեպի-Զայ կոշտած գետակի գրտիրը, որ Կարնի եւ Բասենի միջեւ գտնուող լեռներից սկիզբն առնելով՝ սահում գնում է Բատէնի նոյն իսկ գիւղագաղաքի առաջից դաշտի միջով դէպի հարաւ. Այդ գետակի մօտ վորբ ինչ հանգստանալով՝ վերասոին շարունակեցինք մեր ճանապարհը, թէվիտ դաշտային հարթուուն ընդարձակ ուղի, բայց եւ այնպէս յունիս ամսեայ արեգակնային մի կիզիչ ճառագայթ միջօրեայ տաղով տողորուուխանձում էր մեզ... Մօր գրկում եղած մանկան մերթ մրափել, մերթ անախորժ ճշել էր արձակել տալիս. արեգի այդ ազգեցութեան տակ մի անշարժութիւն, մի առ ժամանակեայ թմրութիւն սկսել էր տիրել ամեն ուրեք:

Յարատեւ ինչ կայ. արեգը խոնարհելով ի մուտ, երեկոյ յեան մի զով քամի յաջորդեց կէսօրեայ այդ տաղտկացուցիչ շոգին, դաշտային կանաչագեղ արտորայք սկսան ծածանուիլ հանդարտիկ-հանդարտիկ. ամեն ինչ գողցես իւր մեզմիկ-մեզմիկ շարժուածքով սկսեց վերստին կենդանանալ ու բնութեան Սրարցին փառաբանել.

Յետ այսմիկ, կապտագոյն եթերի անծայր մակերեւովթի վրայ սկսան անհամար աստղեր վայրիկել, միքանի կրկես հեռու մեր առաջ— արեւելեան կողմը գիւղական ճրագի ազօտ լոյսեր վլվլալ, շների հաջոցներ, նախրների բառացիւններ լոււել: Դա մեր իջեւանատեղին— Արլար թրքախառն գիւղն էր: Այս հասանք... անիւների առաջ բարեր դրուեցան թրը գ Այդ կերոյիշեալ գրւղը նաև գիւղագաղաքի դիմաց—

դաշտի կենդրոնն է գտնվում գրեթէ կէս ժամ հեռաւորութեամբ:

Բասէն՝ առհասարակ գաշտային է հորիզոնական դիրքով եւ լայնածաւալ տարածութեամբ, որի երկարութիւնն երկու օր, իսկ լայնութիւնը մի օրում մարդ հաղիւ կարող է կտրել: Երասխ գետը (որի վրայ շինուած է Զօբան Քէօքրի կոչուած մի կամուրջ եօթնաշեայ), գրեթէ հիւսիսարեւելքից գէպի հարաարեւմուտ, որոր մոլոր ընթացքով այն գաւառն կըքաժնէ երկու գլխաւոր մասերի, որոնցից իւրաքանչիւրն՝ իւր բնական գրից համաձայն իւր անունն առած է, որով մին Վերին եւ միւսը Ստորին Բասէն է կոչվում: Վերին Բասէնն իւր ըոլոր տարածութեամբ մի հիանալի տափակ դաշտ է: Իսկ Ստորին Բասէնն ունի զանազան լեռնահովիտներ, մեծ ու փոքր ձորակներ, բլրակներ եւ այլն:

Ընդհանրապէս առնելով Բասէն գաւառն իւր պատուական եւ արգաւանդ հողերով Կարնոյ գաւառի շտեմարանը կաւըռող է համարուկի, եթէ լաւ մշակուին, որից գորս կըգան ցուրեան, գարի եւ այլն: Բայց ամենաշաւալին այն է, որ տեղական կառավարութեան անհոգութեան ու տգիտութեան պատճառով, այն գեղեցիկ ու զուարձակի երկիրը՝ հակառակ իւր ունեցած ամեն յարմարութիւններին, մանաւանդ հողին, ջրին եւ կենսատու օդին, գրեթէ ամենապարզ պիտոյըներից—ծառատունկից եւ այլ բաներից զուրկ է գտնվում:

Գիւզաքաղաքը շինուած է մի լայնանիատ լեռան հարաւային ստորոտում 250—280 բնակչում բար ասութեամբ տեղացոց, մեծագոյն մասամբ տաճիկ, եւ նախնական մեծութիւնն ու փառքը ըոլորովին կորցրած...:

Մեր սայշապանները մի բակի առաջ եղները լծի տակից արձակելով՝ կանգ էին առել, հաղիւ թէ միքանի րոպէներ աննկատելի կերպով անցան, ահա գողովեցան մեր բոլորտիքն ունակ ցուպին յենած, ոմանկ ծխաքարդը (ըուպուկ) ձեռքեր-

նին բունած՝ հայ ծերունիք, որոնց տիսուր գէմքերի գծաւոր խորշումներից հասկացվում էր, թէ նրանք ինչ անցեալի ջախջախնեալ բեկորներ էին, ինչ անգութ դարի անգութ արկածների կենդանի նահատակներ էին....:

Այսուղի ակամայից պիտի յիշեմ՝ անձրեւից խոյս տալով կարկտին հանդիպեցանք ժողովրդական առածը, որ ծերունիք ինձ մտաբերել տուին:

Այո՛, այդ պատկառելի ալեղարդ ծերունիք, որոնք անգութ ժամանակիս արկածների բեկորներն էին, ոնէին իրենց խոյսուուած անմիտ տակ, ջախջախուած սրտի տախտակի վրայ քողոքներ...: Բողոքներ, մի բռնակալ եւ հարատահարիչ իշխողի, մի հաւասարութեան օրէնք ցյարգող ու չճանաչող կրօնակոլի գէմ...:

Ինչ գյացացակ պատճառ լինիմ ձեզ ազնիւդ ընթերցող, շատ ու շատ բողոքներ... տակայն ուր են լար անաշառ դատարներ...:

Ծերունիք խոր «ախ» քաշելով, միշտ կրկնում էին այս խօսքերը. «Վերցապէս աղքերք, մեր ինքը մրը չեն, մեր արդարացի գանգատներն անխելի են մնում... անաշառ դատաստանի գռները գեռ մեզ համար փակ են»....:

Դեռ շատ ու շատ պիտի երկարէր Մայր-Հայաստանի կրծքի տակ հալ ու մաշ եղող այդ ծերունիների աղեկառու պատմութիւնը, եթէ ժամանակին անցկացած լինելու ուսուի այդ սրտայոյզ պատմութեան թելը խղելով ակամայից, մեզ «գիշեր բարի» մաղթելով իւրաքանչիւրը գնաց իւր տուն:

Խցակս ասացի, ժամանակին անցած էր, գլուխնս մի-միքարի վրայ գնել, սայլերի անիների առաջ երկնալ ու աչքերնիս խփելը մին եղաւ: Արեւելեան կողմը—հորիզոնի մրայից արշալոյնը ծայր տուաւ, առաւօտեան նախերգանք թոշնիկները ճկնացներով սկսան օդը թնդացնել, գիւղական արլորները «ծուղրուղու». կանչել, նախրները բառաշել: Մեր քոնդ ընդհատուեց, եւանք, ընկանք ճանապարհ:

Գնալով գնում ենք Բասէնի դաշտի արեւելեան ուղին ձեռք առաջ, սակայն եւ այնպէս քանի արեգակը լիշեալ դաշտի գործխասատ հորիզոնից դէպի վեր էր բարձրանում, այնքան անսամելի էր դառնում ճանապարհորդութիւնը. Հրատապ շոգը մի կողմից, զեռուները միւս կողմից, որ իրենց վնասակար խայթոցով հարուստներ տաղավ մեզ տղալով՝ ալանում էին դէպի վեր՝ փոշիով ապահանուած օդի մէջ:

Այդ օրն էլ այդպէս մերթ արեգակի հրաբորքոք ճառագայթների տակ խանձաւելով ու փրփրուելով, մերթ զեռուներից հարուստուելով ու խոցուածելով՝ երեկոյեան թորդան գիւղի առաջ կանգ առինք՝ սակաւ ինչ հանգստանալու եւ վերստին մեր ճանապարհը շարունակելու:

Այս թորդան քրութախաւն փոքրիկ գիւղը Բասէնի հարաւային կողմը մի լոռնագոտու ստորոտումն է գտնվում գրեթէ ջրոս ժ. հեռաւորութեամբ: Տեղացիների սուս թէ ուղորդասածին հաւատ ընծայելով, իբր թէ Ս. Գրիգոր Լուսաւորչի թոռներից մինի մասունքի մի կտորն այս գիւղի (հարաւային կողմ) մօտ մի փոքրիկ բլրակի վրայ՝ մի մատրան մէջ ամիսովուած լինի, սր հոգեկան միսիթարութիւնից զուրկ խեղճ հայերին գլխաւոր ուխուստեղի է....

Նոգեկան միսիթարութիւնից զուրկ ասացի. կան այն տեսակ գիւղեր, որոնցից եթէ բախտի բերմամբ մին ունի եկեղեցի, քահանայ չունի, իսկ եթէ քահանայ ունի՝ եկեղեցի չունի. դպրոցների մասին իսկի խօսք ասել պէտք չէ:

Այս տիսուր երեւյթի հետքերը՝ ընդհանրապէս Հայաստանի ամեն կողմերը նշմարելի են:

Երբ պիսոի զարթնինք, Հայեր, միայն գիտութեան իրկարար լուսով կարող ենք մեր գլխի ճարը տեսնել, միայն դրանով կարող ենք մեզ կանել ուղղողի վատ եւ սին ձգտումներն ու միտումները ոչնչացնել....

Վերոյիշեալ գիւղի առաջ փոքր ինչ հանգստանալուց յե-

տոյ, կրկին շարունակեցինք եւ երկու-երեք ժամ էլ գնալով հասանք Բասէնի արեւելեան կողմ գտնուող Քէօփրի-Քէօյ անունով հայագիւղն, որը գիւղաքաղաքից գրեթէ վեցեօթն ժամ հեռաւորութիւն ունի:

Այդ Քէօփրի-Քէօյ գիւղը, ինչպէս իւր անունից՝ Կամուրջաւոր-գիւղ՝ յայտնի է, որի առաջ՝ հարաւային կողմ մի եօթն ացքից քարաշէն կամուրջ կայ, ինչպէս մի քիչ վերեւ ասացի, սրա ներքեւից Բասէնի խրոխտ գետը խոխոնալով անցնում գնում է դէպի արեւմտեան հարաւայտը երկու մասի բաժնելով:

Այդ օրը Սլիարից ելնելով եւ թորդանի առաջից անցնենելով՝ հասանք այս գիւղը եւ մի սրճարանի առաջ կանգ առինք գիւղերելու:

Քիչ թէ շատ հանգստացանք, քնեցինք, ահա, լուսաբացին աբլորները սկսան «ծուզրուզր» կամչել—զարթեցնել տան նահապետին, տանտիկնոց, հողագործ մշակին եւ անմեղ մանկիլ գրկին խտուած՝ հլու հարսին: Վերկացան, հագսն, հագնուեցան եւ երեսնին արեւելք դարձնելով ու խաճակնիքելով, իւրաքանչիւրը գնաց անցաւ իւր գործի գլուխ...:

Մենք եւս ելանք մուժ-լուսին, հիւսիսարեւելեան կողմ Հարան-Ծիւղի, կոչուած լեռնադաշտի շրջապասց ճանապարհը ձեռք առինք:

Գնում ենք Հարանի լեռնադաշտով, մեր դիմաց—արեւելեան կողմը՝ հորիզոնից արևոցի շողշողուն ճառագայթները ծայր տալով՝ սփուռեցան բարձր լերանց գագաթների վրայ, այդ ամառնային առաւտեան զով ճառագայթների ազգեցութեան ներքոյ ամեն ինչ կարծես ժպտալու միտում ունենար, բայց եւ այնպէս բոպէական...: Ահա գլուխնին բաշ գցեցին մի քիչ առաջ ժպտալու միտում ունեցողները: Այժմ իրենց ախոյեանի՝ արեւու գէմ բողոք ունին, որ անխստիր տոցարում ու խանձում է իրենց՝ այս անջուր Հարանի լեռնադաշտում...:

Մի կերպ Հարանի պատ ի պատ պլույտ տուող լեռնա-

դաշտին էլ վերջ տակով, երեւոյեան դէմ հասանք Ծանծռղ
առուած հայագիւղն, որը գրեթէ 52—30 տնից կըբազլանայ եւ
Բասէնի արեւելեան կողմն է ընկնում, մօտաւորապէս տասն
ժամ հեռաւորութեամբ: Դիրքը գեղեցիկ է եւ օդն առողջարար:
Հետեւեալ օրը Ծանծաղից ենելով եւ շարունակելով մեր
ճանապարհը՝ համարեա մէկուկէս ժամ գալով, հասանք Խո-
րոմի լեռնագաշտը, որնոր քիչ կըտարբերուէր Հարանի լեռ-
նագաշտից, մանաւանդ սա աւելի նշանաւոր էր իւր եղերա-
կան մօտիկ անցեալով եւ մի տեսակ սարսափ կազմէր մար-
դուս վրայ, երբ իւր շուրջը անմեղ մարդկանց արեամբ ներ-
կուած հողային կրյաերին հարեւոնցի ակնարկ ձգելու լինէր...:

Դու, Խորոմի դաշտ, մարդկային արեամբ շախազուած
լեռնագաշտ, տեղդ կաց. մենք անցնենք...:

Անցնելով այդ լեռնագաշտից հասանք Զի՞ն սահմանա-
գլուխ—թրքագիւղն, որը Կարնից մօտաւորապէս 20 ժամ հե-
ռաւորութիւն ունի եւ այստեղ է Տաճկաց մաքսատունը:

Սյա թրքագիւղը հիւսիսից դէպի հարաւ ձգուող մի խոր
ձորումն է գտնվում, երկու կողմից—արեւելքից եւ արեւ-
մուտքից պարփակեալ սարերով. նոյնպէս գիւղի քամակն ա-
րեւելեան կողմը կայ բարձր ապառաժի վրայ մի բերդ, որի
հարաւային կողմը կայ մի գետակ, որ եւ հիւսիսարեւելքից
գալով՝ գնում է դէպի հարաւարեւմուտք:

Սատ պէտք է ժամերով սպասել, որ Տաճկաց պաշտօ-
նավար է ֆէնտիներն իրենց սովորութեան համեմատ գան ծանր
ու բարակ քննեն: Վայն եկել տարել է այն անցորդին, որ միայ-
նակ է եւ միանդամայն խեղճ ու անեղու: Մանաւանդ. եթէ
մի քիչ հաս կայ իւղի, իրենք կարող են իւզոտուիլ—սնոտի
պատճառեներ շատ... իրենք գիտեն, թէ ինչպէս պէտք է
վարուել եւ ապս Զի՞նի անձուկ կրծի լայն դռները բացանել...:

Զի՞ն որ հասանք կէսօր էր, միքանի ժամ սպասելուց յե-
տոյ, հազիւ մեր օձիքը նրանց ճանկից ազատելով՝ ճանապարհ

լընկանք եւ գիւղ՝ հիւսիսարեւելեան կողմը գտնուող գետակի
ուղին ձեռք ս գինք եւ գրեթէ մի ժամ շարունակելով՝ հա-
սանք Հիւսի տյիին Առաւեծի հողը—Ղարաւորզան կանգ առինք,
որտեղ և անտապէս կենում են Թումայ սահմանապահ դինուորք
(զազումները) եւ մաքսատան պաստօնեայք, եւ միքանի տուն
էր գաղթական յոյն, մի երկու խանութպան հայեր, որոնք
Թում-Թրքական պատերազմի ժամանակ գաղթած ժուրքերի
տեղերն էին բռնած:

Երբ այս գիւղը հասանք, մի անգամ աչ քերս յառած ցորս
կողմն գիտեցի, եւ երբ տեսայ այն աւերակ տները, մի ներքին
հանգատութիւն զգացի, մի քիչ սիրտա հովացաւ. մանաւանգ
այն գունը վիակ մզկիթն, որի բոլորտիքը մաքրազարդուած
էր անամնոց եւ այն աղբերով...: Մտաբերեցի այն արդարացի
առածը—տուն քանդողին տունը կըլինի աւերակ: :

Ուստաց մաքսապետը եկաւ մեր անցագրերն ու միւս իրե-
ղէններն առանց որեւէ աղմուկի աչքից անցկացնելով՝ մեզ
ճանապարհ գիւղը անհայտ գոյ սիմուրի միայն բայց
Սրեգակը թեքուելու մօտ էր իւր մուտ, մենք գետակի
ամին ի վեր ձորային ուղին ձեռք առնիք:

Սյա ձորային ուղին, որ շրջապատումներով երկրուում
էր գէպի արեւելք, երկու կողմից—հիւսիսից եւ հարաւից
երբեմն-երբեմն երեւում էին սեպաձեւ ժայռեր, որոնք ատե-
թէ, ընութեան ճարտարագործների մի-մի կրթողներ լինսին:

Մութն իւր սեւ վարագոյրով ամեն ինչ ծածկեց մեր աչ-
քից, ամեն ինչ աներեւութացաւ. միայն գետակի խոփողալու-
ճայնն էր լափում եւ գիշերային մժութեան մէջ տիրող լուռ-
թիւնն ընդհատվում նրա փոքրիկ ջրվէժների շուխնչերով...:

Նոր Գիշերուայ, կէսօր տահնեցաւ, գեռ մեր սայլազանները վա-
րուցները ձեռքերնին, եղների կողքին ընկած՝ խթելով լուռ-
ուած շարունակում են գնալ ու գնալ...:

Ի վերջոյ այդ ձորային շրջապատումներով երկարող ուղին

Եւ կարլացահոս գետակին եւս մնաս բայրու ու ասելով, առանց
դադար առնելու, Սօղանկու լեռան զառիվայր վրայ գտնուող
Սպահան անունով աւերակ գիւղը հասանք, որւեզդ նոր էին
եկած միքանի տուն յոյն գաղթականները Այդտեղ ևանդաւ
ունիք հանգստանալու... Յուսար մասացն ու (ցշմնար)՝
Ահա, գեռ քնակարօտ աչքերնին չփակած, առալուտեան
երգեցիկ թռչնիկները Սօղանլուի մայրախիտ անսղառների մի-
ջից իրենց բազմանուագ դայլայիկներով իսոր լուսթիւնն ընդ-
հատելով տկան օդը թռնդացնել Նկանք. առանց այն էլ քնա-
կարօտ աչքերնիս չփերով, դարձեալ ընկանք ճանապարհ, դար-
ձեալ շարունակում ենք մեր ուղին հարգարտիկ—անրնդ հատ։
Մի ժամուայ չսփ գալով, հասանք նոյն իսկ Սօղանլուի
անտառային լեռնագաշամին։ Արեգակի ոսեղօծ ճառագայթ-
ները հորիզոնից պատրայի սփուցան այդ անտառախիտ լեռ-
նագաշտիկի ծաղկաւէտ կանանչագեղ մարգերի վրայ։

Որ կողմի դառնաս, բնութիւնն իւր հրաշալիքներով ՝
արեգակն երկնային կենդրոնից իւր թափանցիկ ճառագայթ-
ներն ամեն ուրեք տարածում էր, մայրիների բարձր կատար-
ների վրայ՝ բնիկներում նստող սեւ ագռաւներն իրենց ազուա-
մազ ձագուկների հետ կտուց կոցի տապավ՝ կռկում էին, երկ-
ցաւ նապաստակները մերթ ընդ մերթ վավիրիկ խոտերի ծայ-
րերից կտցելով, այս ու այս կողմն էին ուստառում. մի աներե-
ւոյթ ձեռքի գոյնզգոյն ծաղկիկներուի բանուած գորգի—կանան-
չագեղ մարգերի վրայ անհամար մեղաներ՝ տղարով պաշար
էին հաւաքում իրենց թեւկիների տակ... մաս ու մաս ու մաս ու մաս
չըաշալի տեսարան, ո՞ր կողմը շուռ գտաւ, բնութիւնը
ժպտում է...։

Գնում ենք, : Ահա քեզ մի այլ տեսարան։ Արեւելեան կողմ
